



ՄԱՍԼՈ ՉԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում տեղի ունեցավ Հայաստանում գենդերային բռնության դեմ միջգերատեսչական հանձնաժողովի առաջին նիստը

Երևան, 12-ր մայիսի, 2010թ. – Այսօր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում տեղի ունեցավ Հայաստանում գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի առաջին նիստը:

Հանձնաժողովը ստեղծվել է համաձայն ՀՀ Կարգապետի՝ 2010թ. մարտի 30-ի N213-A որոշման: Ազգային միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծումը դարձավ քաղաքական կամքի աննախադեպ դրսևորման քայլ քաղաքականության մշակման ամենաբարձր մակարդակներում, որոնք ցույց տվեցին ՀՀ Կառավարության՝ Հայաստանի Հանրապետությունում գենդերային բռնության վերացման ուղղված հստակ քայլերի ձեռնարկման պատրաստակամությունը:

Հանձնաժողովի ստեղծման որոշումը ՄԱԲՀ-ի հայաստանյան գրասենյակի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղղված պաշտոնական նամակին հաջորդող քայլն էր: Այն շեշտադրում է ոլորտում գործող մի շարք կառույցների կողմից ներդրվող ջանքերի համակարգման կարևորությունը և գենդերային բռնության նվազեցմանն ու կանխարգելմանն ուղղված ծրագրերի և ազգային քաղաքականության իրականացման համար ՀՀ Կառավարությանն ուղղված ընթացիկ աջակցությունը, ինչպես նաև կոչ է անում ՀՀ կառավարությանը պաշտոնական ամենաբարձր մակարդակում ստեղծել համակարգման և մոնիթորինգի հատուկ մարմին ոլորտում իրականացվող ծրագրերի արդյունավետությունը ապահովելու նպատակով:

Նիստը վարեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Պրն. Ֆիլարետ Բերիկյանը: Խոսնակների թվում էին՝

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ՝ Տկն. Լալա Ղազարյանը,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ՝ Արմենուհի Թանաշյանը,
- ՄԱԲՀ-ի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի ազգային համարգող՝ Տկն. Ջինա Սարգիզովան:

Հանձնաժողովի կազմում են ներկայացուցիչներ հետևյալ կառույցներից.

- ՀՀ կառավարության աշխատակազմ,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- ՀՀ տարածքային կառավարման նախարարություն,
- ՀՀ արտաքին գործերի նախարարություն,
- ՀՀ առողջապահության նախարարություն,
- ՀՀ արդարադատության նախարարություն,
- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,
- ՀՀ կրթության և գիտության նախարարություն,
- ՀՀ Ոստիկանություն,
- Միջազգային կազմակերպություններ, այդ թվում՝ ՄԱԿ-ի գործակալությունները (ՄԱԲՀ, ՄԱԶԾ, ՅՈՒՆԻՍԵՖ, ՄԱՓԳՅԳ), Միգրացիայի միջազգային կազմակերպությունը, ԵԱՀԿ-ի գրասենյակը, ԱՄՆ ՄՁԳ-ն, ինչպես նաև
- Տեղական ՀԿ-ներ, այդ թվում՝ Հայաստանի համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, Կանանց ռեսուրսային կենտրոնը և Կանանց իրավունքների կենտրոնը:

Նիստի ընթացքում Հանձնաժողովի անդամները համաձայնեցին ստեղծել երկու աշխատախումբ.

- ա) Կազմակերպչական հարցերի աշխատանքային խումբ, որը կմշակի գենդերային բռնության վերացման Ազգային միջգերատեսչական հանձնաժողովի կանոնադրությունը, և
- բ) Ծրագրային աշխատանքային խումբ, որը կաշխատի Հայաստանում գենդերային բռնության վերացման 2011-2014թթ.. Ազգային ծրագրի մշակման և խթանման ուղղությամբ:

ՄԱԲՀ-ն՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը, միջազգային զարգացման գործակալություն է, որը սատարում է յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի՝ առողջ կյանք վարելու և հավասար հնարավորություններ ունենալու իրավունքները: ՄԱԲՀ-ն աջակցում է երկրներին քաղաքականությունների և ծրագրերի մշակման գործընթացում բնակչության տվյալների ներգրավված միջոցով, որն իր հերթին նվազեցնում է աղքատությունն ու ջատագովում, որ յուրաքանչյուր հղիություն լինի ցանկալի, յուրաքանչյուր ծնունդը՝ անվտանգ, յուրաքանչյուր երիտասարդ զերծ լինի ՄԻԱՎ/ԶԻԱԴ-ից, և յուրաքանչյուր աղջիկ և կին ստանա արժանապատիվ և հարգալից վերաբերմունք:

Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել ՄԱԲՀ գրասենյակ, Սիդնեյ Ղազարյանին՝ gazarjan@unfpa.org, հեռ. 543417, Ջինա Սարգիզովային՝ sargizova@unfpa.org, հեռ. 541792, կամ ՀՀ ԱՄՀ նախարարություն, Արմենուհի Թանաշյանին՝ armine.tanashyan@mss.am, հեռ. 565321: